



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ Ր Ա Ս Ա Ն

№ 192 ք/106 ՁԼ 11 2018թ.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄՔԻՈՆՆԵՐԻ ԿԱՐԻՉՆԵՐԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) գիտական խորհրդի 2016թ. մայիսի 26-ի թիվ 7/6 որոշմամբ հաստատված «Երևանի պետական համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգի» (այսուհետ՝ ընթացակարգ) 8-րդ կետի պահանջները և ղեկավարվելով ԵՊՀ կանոնադրության 56-րդ կետի 10-րդ ենթակետով.

հ ր ա մ ա յ ու մ ե մ՝

1. 2018թ. դեկտեմբերի 11-ին, ընթացակարգի համաձայն նշանակել և անցկացնել ԵՊՀ ներքոհիշյալ ամբիոնների վարիչների մրցութային ընտրություն.

ա) Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի ընդհանուր մաթեմատիկայի ամբիոն,

բ) Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ջրաերկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության ամբիոն,

դ) Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի սոցիալական և կլինիկական հոգեբանության ամբիոն,

ե) Ռուս բանասիրության ֆակուլտետի ռուսաց լեզվաբանության, տիպաբանության և հաղորդակցման տեսության ամբիոն,

զ) Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոն,

է) Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ֆինանսահաշվային ամբիոն,

ը) Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետ տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոն,

թ) Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոն,

ժ) Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի ալիքային պրոցեսների տեսության և ֆիզիկայի ամբիոն,

ժա) Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի բարձրագույն մաթեմատիկայի ամբիոն,

ժբ) Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի ֆրանսիական բանասիրության ամբիոն,

ժգ) Ֆիզիկայի ֆակուլտետի ընդհանուր ֆիզիկայի և աստղաֆիզիկայի ամբիոն,

ժդ) Ֆիզիկայի ֆակուլտետի ակադեմիկոս Գ.Սահակյանի անվան տեսական ֆիզիկայի ամբիոն,

ժե) Ֆիզիկայի ֆակուլտետի օպտիկայի ամբիոն,


ժզ) Ֆիզիկայի ֆակուլտետի մոլեկուլային ֆիզիկայի ամբիոն:

2. ԵՊՀ գիտական քարտուղարին՝ սույն հրամանի 1-ին կետում նշված ամբիոնների վարիչների ընտրության վերաբերյալ հայտարարությունն ընտրությունից առնվազն 30 օր առաջ հրապարակել ԵՊՀ ինտերնետային կայքէջում և պատշաճ կարգով կազմակերպել ամբիոնների վարիչների թեկնածուների առաջադրման վերաբերյալ փաստաթղթերի ընդունման գործընթացը:

3. Սույն հրամանի մասին սահմանված կարգով տեղեկացնել ԵՊՀ անձնակազմի կառավարման և իրավական ապահովման վարչությանը, ԵՊՀ գիտական քարտուղարին և ֆակուլտետների ղեկաններին:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ



Ա. Ա. ՍԻՄՈՆՅԱՆ